



ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ

(Պատրիարք Թուրքիոյ հայոց)

Լ Ո Ւ Ս Ա Վ Ո Ր Չ Ի Ա Ջ Ը

Շողակաթի տունին առիթով

«Տօն է ՇՈՂԱԿԱԹԻՆ Սրբոյ էջմիածնի,
քստ տեսեալն Սրբոյն Գրիգորի մեծոյ Լուսաւորչին»:

ՏՈՆԱՃՈՒՅՑ



ատահական կամ կամայական չէ
զուգահիստութիւնը երկու տոննե-
րուն— Շողակաթին՝ Ս. էջմիա-
ծնի և Վերափոխումին՝ Ս. Աստ-
վածածնի: Մեկը սրտակաթորեն

կկոչն զմիտար՝ սրբազան խորհուրդի մը
գրավւթյամբ:

«Շողն աստվածեղեն»՝ առաջ է քան իր
սկզբնական իշումը Ս. Կույսի մը մեջ «շնոր-
հալի», որ ընտրված էր ըլլալու, և եղավ,
«Մայր Լուսոյ»: Տոնախմբութիւնը երկու
մայրերու, մեկը վիմեղեն և «անշնչական»,
որ սակայն «տայ կեանս և մահու իշխէ» և
«գերազանց քան զքանականս՝ յանշնչու-
թեանն հրաշագործէ» (Նարեկ, ՀԵ, Ժ). մյուս-
ը՝ մարմնեղեն և խորհրդակիր, որ է «նշմ
շնչական, ծառ կենացն անմահից» (նույն,
Զ. ա): Երկուքն ալ մայրացած նույն շողով—
Ս. էջմիածինը և Ս. Աստվածածինը: Զէ՛ որ
«թէ Աստուածածինն իսկ պատկեր զտայն
գնկեղեցի ոք գրեսցէ, ոչ անօրինի», մանա-
վանդ որ «նայն ինքն Փրկչին անուամբ վա-
յիլապէս յորչարչեցաւ» (նույն, ՀԵ, Ժդ):

Ունինք «Տեսիլը» մեր հրաշալի Վերա-
ծնունդին, Տեսիլը՝ հյուսված շողերովը
«Լուսոյ Հօր», «Արդարութեան Արեգակ»-ին
և «Ճշմարտութեան Հոգի»-ին: Եվ ընդհուգ-
ված խավարտչին խորվիրապի մը մեջ, պայ-
ծառ ու ստեղծագործ երևակայութեամբն ա-
նոր՝ որ իր լուսառէջները կքաշն նախախնա-
մությամբ պատրաստված ու ծածկված իրո-
ղությանց մեջն ապագային: Տեսիլը բազ-
մաշարժար վկային և մարգարեին:

Շողը կկաթի աստվածեղեն՝ այդ Տեսիլին
«աստուածակերպ սքանչելի անպատում»
(Ագաթանգեղոս), որ լուսապատկերն է՝ ցո-
լացած վաղվան իրականութենէն:

«Աշխարհի Լույսն» է այն, «Միածինը» ի
համիտեանից, Միածինը ժամանակին մեջ,
Միածինը հիմակ իշած «ի շինամէջ քաղա-
քին», որ «կը յատակի հարք հաւասար դաշ-
տանէ»: Կողորդա, կսարսի ու կհեծն մեհյանը
Սանդարամետին: Մեհյանը մշուշին և ան-
գիտութեան, միայն աղոտ ճրագի մը նշույլին

ներթափանցումովն արևապաշտ հայու հոգ-վույն...

Տեսիլը Տաճարի ծրագրին, պարզված հոգ-վույն խորը զարթոն ու «ամախորհ» հայ մարգարեին: Բայց և ցուցումներով երկնային ճարտարապետին՝ Միածնին:

Եվ ահա էջֆն ասոր արծվեթուղ խոյանքով, «Ուտն մի մեծ Ոսկի» իր Աջին մեջ: Կթանդվի մեհյանը Սանդարամետին՝ իր բագինովը զինեձոնին: Եվ նույն Ոսկի ուտով՝ Լուսավորչի Աջը, մխացող ավերակին վրա կուտան, կկանգնե խնկաբույր Տունն Աստուծո— էջմիածինը՝ իր Խման Սեղանովը սրբալույս: «Այց»-ի է եկած «ողորմութիւնն Աստուածութեան», իրեւ «ցուցակեան»—ապացույց—սիրուն արարչութեանն ի մեզ:

Տեսիլն է այն անջնջելի, դարերու բովանդակութեամբ մարմին առած Մայր Տաճարին մեջ մեր հավատքին: Տաճարը՝ Մայր Արտուով և էջմիածնաշեն Աջով:

Եվ այս Տեսիլը կըլլա ու կմնա անփոխանակելի Տեսլականը հայուն հավատքին և միածնաշունչ կյանքին—բխտունեակեան լուսադրոշմ կրօնքին:

Ս. էջմիածինը, «մեղեքն սյունը», «Կարօղիկն Եկեղեցին»—Լուսախորանն է մեր հավատքին, վառարանը աստվածային սիրո կրակին, որուն կենսածին կայծերով բոց կառնեն ու կարծարծին մյուսունաթուրմ պատույզները հայ եկեղեցիներու բոլոր կանթեղներուն: Եվ ասոնք, ամբողջը մեկ, կկազմեն սրտախոսիկ ավանդության առաքառն Մըշտավառ մեր հոգիները «ի լոյս աստուածգիտութեան» վերածնող Հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչին:

Արթուն և հսկող Հովիվ՝ այնտեղ է ինք, Կաթողիկե Ս. էջմիածնի մեջ, մոռյլ ու պայծառ օրերուն մեջ միշտ, իր լուսափյտու և հուսակիր Աջով՝ հպած Լույս Աջին—Աշխարհի Լույսին:

Ո՞ր հավատավոր հայ հոգվույն մեջ չի կաթիր շիթ մը այդ աստվածեղեն Շողեն:

Ո՞ր բարեբարիշտ հայ չի շնչեր իր հոգիեն ներս՝ պարարող քաղցրությունը՝ անմահության հոտ բուրոյղ այդ երկնէջ Շողին:

Ո՞ր «զմիտս Բրիստոսի» ունեցող հայ հավատացյալ պիտի չպարուրվի հոգեզմայլանքովն այդ Տեսիլի խորհուրդին:

Հրաշագործ Աջը Լուսավորչին...



Արկածալից անցուղարձեր, բարի ու շարժամանակի ընթացքին, այս Այն ըրին անդատական: Բայց Աջակեռար Լուսավորչին մնաց իր հիմերովը հաստատուն ու անսասան: Եվ կմնա այդպես մինչև այսօր: Ո՞վ պիտի ամբարշտեր ըլլալու հոռետես կամ չա-

րատես: Կմնա—շողարձակ երկինք վկա—և պիտի մնա էջմիածինը Սուրբ, Սրբութեանց Սուրբը մեր կենդանի հավատքին, իր լուսնդեն էջֆի խորհուրդով ու սեղանով, իր տեսլային Մեծ Ոսկի Ուտի զորութեամբ և մյուսունարույր Աջի օծութեամբ:

Ս. էջմիածինը, մեր հավատքին Լուսախորանը հավետ, քար սրտեր և երիթացած շրթներ միայն պիտի ուրանային դայն և պիտի արհամարհեն փասքուա բարուրանքներով:

Եվ ո՞վ գլուխ պիտի ցցեր անոր դեմ, թի իսկ Աջ մըն ալ ինք ունեցած ըլլար իր ձեռքին մեջ՝ Լուսավորչի մասունքովը նվիրականացած և համբուրելի:

Նժեհհացած Աջ մը, ուրիշ աչիրու հետ, գացած դադար առած նոր և հյուրընկալ հանգստավայրի մը մեջ և հովանիին տակ նորակերտ եկեղեցիի մը՝ Լուսավորչի անունով օծված ու կնքված:

Եվ այս Աջը՝ դե՞մ այն աչին՝ որ կհանգչի իր իսկ կերտած սրբավայրին մեջ: Պատահականն ու մասնականը՝ իսկականին և ընդհանրականին՝ դեմ: Ո՞ւր է ողջադատության և արդարության չափն ու կշիռը՝ գտնելու և գնահատելու մեկին իրական և մյուսին հարբերական արժեքը:

Կրկնե՞նք, ավելորդ անգամ:

Ս. էջմիածինը հիմնարկված է Ոսկի Ուտով Միածնին, առ զօրութեամբ, այլ Հոգավոյ: Ապա կառուցված է «սփանջի Տեսիլ»-ի մը ցուցումով, կենդանի Աջովը Ս. Լուսավորչին: Ան եղած է, և է, հավերժական շտեմարանը երկնէջ Շողին՝ քրիստոնեական հավատքին և ասկե ծնունդ առած մեր բոլոր հոգևոր և մտավոր ժառանգություններուն: Շողն «Աշխարհի Լույս»-ին, որուն արեգդիմած է, դարեր ու դարեր շարունակ, հոգին հայ հավատավորին՝ ուրախությամբ մանդղծելի հավիտյան:



Այժմ պատմությունը կընեն մեզի 1441-ին ծնունդ առած, 1956-ին գողցված և 1957-ին վերադարձված Աջի մը մասին: Երկյուղածությամբ կխոնարհինք անոր առջև, թե իսկ մասունք մը կրած ըլլա ան իր մեջ Ս. Այն: Գողցված էր ան, խիստ ամոթալի դեպքերով զոհողոյային: Եվ այժմ գտնված է ան, հոգ չէ թե շա՞ր ոգիի մը ձեռքով: Կգնահատենք բերկրանքն ու խանդավառությունը մեր հավատավոր ժողովուրդին և անոր առաջնորդներուն: Բայց, ավաղ, այդ բերկրանքին ու խանդավառության մեջ կա բան մը, որ բեկում ու խռովք կպատճառե ճշմարիտ հավատացյալի սրտին:

Եթե սիրազան մասունք մը կրող Աջը այդ-
քան գուրգուրալի է—և արդարև է—հապա
ինչպե՞ս և ինչո՞ւ անոստ մնացին սալի պես
սրտերը, այն սիրաշարժ հրավեր-ձայնին
առջև, որ կուգար Ս. էջմիածնեն և Միածին
Աջի Ոսկի Ուտին հպած Ս. Աջեն հանուր հա-
յոց կուսավորչին: Հրավեր-ձայնը հեզանուշ՝
Ամենայն Հայոց Հայրապետին՝ վերադարձին
համար կոսոված խաղաղության և հաշտու-
թյան:

Ինչո՞ւ, ինչո՞ւ բյուրապատիկ բերկրանքով
ու խանդավառությամբ չընդառաջեցին այս
սրտաբուխ հրավերին, կոչված ըլլալու միա-
վորիչ ու շինիչ: Հրավերին Անոր, որ «բուն
խսկ Աջապառն» էր և է Ս. կուսավորչին: Եվ
ըստ այնմ ալ, ուղիղ գծով, արժանավոր հա-
ջորդն Անոր, Հայաստանյայց Հայրապետին,
Անոր հարազատ Տանը՝ Ս. էջմիածնի մեջ:



Ստորնացո՞ւմ, արժանապատվության վի-
րավորա՞նք, պատվի անկո՞ւմ, վարկի բե-
կո՞ւմ պիտի ըլլար, եթե տխուր պարագանե-
րու տակ «ընտրվածը» և անկանոն պայման-
ներով «օծվածը», ունենար համեստությունը,
հեզությունն ու խոնարհությունը Փրկչին,
սրտագին իղձով փութալու Ս. էջմիածին—
իր ալ հոգևոր Մայրը—ծուկի գալու Իջման
Ս. Սեդանին առջև, և լեցված Տեսիլի լուա-
լիր ներշնչումներով, ուխտավորի մը ջերմե-
նանդությամբ աղոթելու Եկեղեցիին հետ:

«Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ
աղօթիւք և միջնորդութեամբ բազմաշարշար
վկայինք քոյ և Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի
կուսաւորչին՝ մեծաւ փառօք և քաղմութեամբ
գօրացդ լուսեղիմաց իջեր յերկնից ի դաշուն

Արարեալեան, ի յայցելութիւն փոքու հօտիդ
քոյ Ազգիս Հայոց, և ի ցուցումն յատկականի
սիրոյդ և մեծի ողորմութեանդ, և Ոսկի Ու-
նամբ քախեցեր զխորս անդեղոց և հալա-
ծեցեր զգունդս սանդարամետականաց, ուր և
լուսածն յօրինամամբ հաշակերտեցեր
զՄԱՅՐ ԱԹՈՒՆ մեր, զՍուրբ էջմիածին, և
արարեր զնա շտեմարան անպատելի շնոր-
հացդ աստուծայնց՝ ի լինել ծնող, դաս-
տիարակ և կատարելագործիչ ամենայն եկե-
ղեցեացս Հայաստանեայց: Արդ, պահես
զնա անարատ, հաստատուն և անաղօտ, ի
պայծառազարդութիւն եկեղեցեացս մերոց և
մանկանցս սոցին՝ մինչև ի կատարած աշ-
խարհի. յորոց միշտ փառաւորի ամենասուրբ
անուն քո յափտեալս յափտենից. «ամէն»:

Օ՜հ, աստվածեղեն Շողեն շիթ մը պիտի
իջներ նաև այս «ընտրված»-ին վրա, որ պի-
տի ընդուներ օծումն այդ Շողին, որպես
Սրբալույս Մյուտոնն կարած՝ խորհրդաբար:

Եվ որպես ընտրյալ և օծյալ Աստուծո, վե-
րականդանացած ու կազդուրված հոգևոր գո-
րուկեամբ, խաղաղության և հաշտության,
ճշմարտության և Միեկեցութեան Ս. Հո-
գիով, ձերբազատված ու մաքրված խայթեն
խղճին,— պիտի վերադառնար իր Աթոռը,
փառքովն ու պատիվովն այդ Աթոռին, և ու-
նենալով իր հետ Ամենայն Հայոց Հայրապե-
տին հոգեբուխ մաղթանքը վասն շինու-
թյան և բարեկարգության, վասն պայծառու-
թյան և արդյունավետ հառաջդիմութեան
նույն այդ Աթոռին:

(«ՇՈՂԱԿԱՅ», պաշտոնաթերթ Ս. Խաչ
դպրեմանուգ Պատրիարքության հայոց
Թուրքիո, № 8, օգոստոս, 1957 թ.)

